ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀ ք. Երևան, երկու հազար տասնչորս թվականի մարտի չորսին

Մենք՝ <<ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ>> ՓԲԸ-ն գտնվելու վայրը՝ ք. Երևան Մ. Բաղրամյան պող. 78, համաձայն թիվ 39/02-07-106 լիազորագրի տրված՝ 03.03.2014թ. հանդես է գալիս քաղ. Արտակ Մնացականի Երեմյանը անձնագիր [redacted] տրված՝ 06.08.2011թ. 009-ի կողմից հաշվառված՝ ք. Երևան Մ. Խորենացու 47 շ. բն. 39 (այսուհետ՝ վաճառող) և Արտակ Փայլակի Յայլոյանս անձնագիր [redacted] տրված՝ 24.10.2006թ. 008-ի կողմից հաշվառված՝ ք. Երևան Իսակովի 50/1 շ. 27 բն. (այսուհետ՝ գնորդ)

Կնքեցինք սույն պայմանագիրը հետևյալի մասին

1.Վաճառողը համաձայն 26.12.2013թ. թիվ 86 ՕԱՊ-1 աճուրդի արձանագրության վաճառեց <<Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն>> ՓԲԸ-ի սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր Մ. Բաղրամյան 76 /յոթանասունվեց/ շենքի թիվ 2 /երկու/ շինությունը, իսկ գնորդը գնեց ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր Մ. Բաղրամյան 76 /յոթանասունվեց/ շենքի թիվ 2 /երկու/ շինությունը ամբողջությամբ:

2.Վաճառվող անշարժ գույքը բաղկացած է 923.7 քմ ընդհ. մակերեսից, 0.19459 /ընդհանուր համատեղ սեփականություն/ և 0.038736 հա /անհատույց օգտագործում/ հանդիսացող հողամասերից:

3. Նշված անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանում է վաճառողին համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Կենտրոն տարածքային ստորաբաժանման կողմից 04.03.2014թ. տրված թիվ 04032014-01-0209 սեփականության վկայականի:

4.Վաճառվող անշարժ գույքը կալանքի, արգելանքի տակ չի գտնվում համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Երևան տարածքային ստորաբաժանման Արաբկիր սպասարկման գրասենյակի կողմից 04.03.2014թ. տրված թիվ ՄՏ-04032014-01-0144 միասնական տեղեկանքի: Առկա է 20.8 քմ ինքնակամ շինություններ:
0.19459 հա հողը ընդհանուր համատեղ սեփականություն է Մ. Բաղրամյան պող. 76 տարածք հասցեի հետ:Հողի կադաստրային արժեքը վճարված չէ:

5.ՀՀ գույքահարկի մասին օր-ի 8-րդ հոդվածի համաձայն նոր սեփականատիրոջն է անցնում օտարման պահի դրությանբ անշարժ գույքի համար չմարված հարկային պարտավորությունները:

6.Նշված անշարժ գույքը վաճառվել է 75.393.360 /յոթանասունհինգ մլն երեք հարյուր իննսուներեք հազար երեք հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ, որը փոխանցվեց Կենտրոն ՊՈԱԿ-ի հաշվին:

7.Սույն պայմանագրի կնքման հետ կապված ծախսերը կատարված են գնորդի կողմից

8.Կողմերը պայմանավորվում են, որ վաճառողը անշարժ գույքը կհանձնեն գնորդին մինչև 04.03.2014թ.:

9. Համաձայն ՀՀ քաղ. օր-ի 563 հոդվածի սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումում 30/ երեսուն/ օրվա ընթացքում:

10. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 4 օրինակից, որոնցից մեկ օրինակը պահվում է Երևանի Արաբկիր նոտարական տարածքի նոտարական գրասենյակում, մյուս օրինակները տրվում են կողմերին:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

Վաճառող՝ <<ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ>> ՓԲԸ-ի լիազ. անձ՝

Գնորդ՝

Երկու հազար տասնչորս թվականի մարտի չորսին
Սույն պայմանագիրը վավերացված է իմ Երևանի Արաբկիր նոտարական տարածքի նոտար՝ Սուսաննա Դանիելյանիս կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրն ստորագրած անձանց ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև օտարվող գույքի նկատմամբ <<ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ>> ՓԲԸ-ի իրավունքները և լիազորված անձի լիազորությունները ստուգված են: Համաձայն ՀՀ քաղ. օր-ի 563 հոդվածի սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում 30/երեսուն/ օրվա ընթացքում:

Գրանցված է սեղանամատյանում 1122

Գանձված է պետական տուրք և ծառայության վճար:

Ս. Հ. ԴԱՆԻԵԼՅԱՆ